տէրտարի՝ որդոյ Մուստաֆա փաշայի տէֆտէրտարի, որ յայսմ տարւոջ սպանեցին, նորա տունն այրեցաւ և խիստ էր բարկ, բայց հասեալ ի վերայ տեարք քաղաքիս գչորս դիհն կտրեցին մինչև յերկու ժամն և ապա սակաւ սակաւ էանց։

Շաբաթ օր (12 Յուլ.)*։ Երեկոյիս Եղիազար վարդապետն դաս ասաց ի Սուրբ Նիկողոս, եւ որք արարեալ էին չարութիւն եւ թշնամութիւն՝ թողութիւն շնորհեաց ամենեցուն, և ասաց թէ Նոքա ոչ են պարտական՝ որք ռամիկ են եւ աշխարհական, բայց այս ամենայն ի մեծամեծացն է և կարգաւորացն. առաջի սարսափելի դատաստանին Քրիստոսի մերկապարանոց և ձեռս ի պօղպատքն եղեալ արասցէ դատաստան Աբարիչն ամենայնի։*

Եւ առաւօտուս Կիրակի (13 Յուլ.) *Վարդավառ։ Գնացաք ի Սուրբ Նիկողոս, եւ ելեալ ասաց Վարդապետն գքարոզ Վարդավառին եւ յետ այնորիկ մտաւ ինքն ի պատարագ և ճաշոյիս ելաք ի ժամուն։ Եւ օրս այլն եկաւ յէջմիածնայ, զոր ուղարկեալ էին, և եբեր թուղթ ի կաթողիկոսէն։ Եւ յետնուցս Իգնատիոս վարդապետն եկաւ ի Կաֆայու՝ աշակերտ Եղիազար վարդապետին. և անդ էաք մինչև յերեկուն, և ելեալ եկաք։*

Բշի օր (14 Յուլ.) *պայրամ արարին Տաճկունքն։*

Գշի օր (15 Յուլ.)*։*

Դշի օր (16 Յուլ.)*. յետին օր պայրամիս։ Թագաւորն ի Քէհատխանան գնացեալ եւ անդ թողեալ զսպասաւորսն, թէպտի շուրջ եկաւ ի ծովեզերքն եւ Դ մարդ սպանեալ վասն թութունին զոր խմէին ամենեքեան խիստ, եւ մինն յըսպանելոցն կին էր գինով, և մունետիկ կանչեցուց թէ Հրաման թագաւորի է, այսուհետեւ ո՛վ որ խմէ՝ յիւր հախէն կու գան*